Հաստատում եմ

ՀՊՄՀ ռեկտոր՝ ____________________ Ս. Գևորգյան

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
# ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

| | |
|---|---|
| **1. Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը** | *011301.03.6 Սոցիալական մանկավարժություն* |
| **2. Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ** | *Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ* |
| **3. Շնորհվող որակավորումը** | *մանկավարժության բակալավր* |
| **4. Կրեդիտների քանակը** | *240 ( երկուհարյուր քառասուն)* |
| **5.Բարձրագույն ուսումնական հաստատություն** | *ՀՊՄՀ* |
| **6. Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ** | *Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի* |
| **7. Կրթական ծրագրի հիմնական սպասարկող ամբիոն(ներ)** | *Մանկավարժության ամբիոն, Կիրառական և զարգացման հոգեբանության ամբիոն* |
| **8. Կրթական ծրագրի ուսուցման լեզու** | *Հայերեն* |
| **9. Կրթական ծրագրի ուսուցման ձևը** | *Առկա/հեռակա* |
| **10. Կրթական ծրագիրը հավատարմագրված/լիցենզավորված է՝** | *Լիցենզավորված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից* |

**11. Կրթական ծրագրի ընդունելության չափանիշները ( մուտքի պայմաններ):**

*Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:*
*Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ Կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:*

**12. Կրթական ծրագրի կառուցվածքը և նկարագիրը**

*Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝*
*ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (42 կրեդիտ աշխատածավալով), մաթեմատիկական և բնագիտական (8 կրեդիտ աշխատածավալով), մանկավարժական և հոգեբանական (4 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր և հատուկ մասնագիտական (156 կրեդիտ աշխատածավալով) ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (30 կրեդիտ աշխատածավալով):*
*1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս (42 կրեդիտ)*
*Պարտադիր դասընթացներ (38 կրեդիտ)*

*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:*
*Կամընտրական դասընթացներ (4 կրեդիտ)*
*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ:*
*2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս ( 9 կրեդիտ)*
*Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)*
*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:*
*3. Մանկավարժական և հոգեբանական կրթամաս (4 կրեդիտ)*
*Պարտադիր դասընթացներ (2 կրեդիտ)*
*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ , որոնք նպատակաուղղված են ընդհանուր մանկավարժական և հոգեբանական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:*
*Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)*
*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ:*
*4. Ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամաս (156 կրեդիտ)*
*Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:*
*Պարտադիր դասընթացներ (150 կրեդիտ)*
*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ:*
*Կամընտրական դասընթացներ (6 կրեդիտ)*
*Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ:*
*5. Կրթական այլ մոդուլներ (30 կրեդիտ)*
*Կուրսային աշխատանք (4 կրեդիտ)*
*Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում:*
*Ուսումնական պրակտիկա (0 կրեդիտ)*
*Մանկավարժական պրակտիկա (18 կրեդիտ)*
*Նախատեսում է բազմամասնագիտական թիմում մասնագիտական գործունեության ուսումնասիրում, որի նպատակն է բակալավրերի հոգեբանամանկավարժական փորձի ձեռքբերումը:*
*Ամփոփիչ ավարտական որակավորման քննության նախապատրաստում (7 կրեդիտ)*
*Ամփոփիչ ավարտական որակավորման քննություն ( 8 կրեդիտ)*
*Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:*

**13. Ծրագրի նպատակները**

*Ծրագիրը նպատակը.*

- *բակալավրի աստիճանում աշխատաշուկայում մրցունակ սոցիալական մանկավարժների պատրաստումն է, որոնք կունենան սոցիալական մանկավարժության և հոգեբանության ոլորտի հիմնարար գիտելիքներ, կրթության, սոցիալական պաշտպանության և այլ ոլորտներում սոցիալ-մանկավարժական գործունեության իրականացման համար անհրաժեշտ կարողություններ, հմտություններ,*

- *տարբեր տարիքային խմբերի հետ սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ, վերականգնողական, շտկողական և զարգացնող աշխատանքների պլանավորման, իրականացման կարողություններ, անձնային աճ, ինքնուրույնություն, քննադատական մտածողություն, մասնագիտական ինքնորոշման անհրաժեշտ մակարդակ:*

| **14. Ծրագրի կրթական ելքային արդյունքները** |
|---|
| Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն |
| *Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝*<br><br>*Ա1. ներկայացնել ՀՀ-ի կրթության քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվային և իրավական ակտերը, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ և ծրագրեր), կրթության հիմնական հասկացությունները,*<br>*Ա2. մեկնաբանել մանկավարժական, սոցիալ-մանկավարժական մտքի ձևավորման ու զարգացման պատմությունը, ժամանակակից հիմնախնդիրները, սոցիալ-մանկավարժական և հոգեբանական գիտությունների տեսական հիմքերը, սկզբունքներն ու հայեցակարգերը, միջգիտական կապերը (հասարակագիտական, բնագիտամաթեմատիկական և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ), կրթական համակարգերի զարգացման փուլերը, ուսուցման կազմակերպման ձևերը (այդ թվում նաև ներառական), կրթության որակի չափորոշիչները,*<br>*Ա3. բնութագրել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական, զարգացման առանձնահատկությունները, սոցիալականացման մեխանիզմները, օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ- մշակութային, տնտեսական) գործոնները, սոցիալականացման շեղումների պատճառները, դրանց կանխարգելման, հաղթահարման սոցիալ-մանկավարժական և հոգեբանական ուղիները,*<br>*Ա4. մեկնաբանել սոցիալական մանկավարժի մասնագիտության առանձնահատկությունները, մասնագիտական գործունեության ուղղությունները, գործառույթները, տարբեր մասնագետների, սոցիալական ինստիտուտների և ծառայությունների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բովանդակությունը, ուղղությունները, այն իրականացնելու ուղիները, հնարներն ու ձևերը,*<br>*Ա5. ձևակերպել նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում, մանկատներում, ցերեկային, շուրջօրյա խնամքի կենտրոններում, այլընտրանքային խնամքի գործընթացներում, քրեակատարողական, զինվորական, բժշկական հիմնարկներում, նաև սոցիալականացման տեսանկյունից խոցելի համարվող խմբերի հետ սոցիալ-մանկավարժական գործունեության գործառույթները, ուղղությունները, առանձնահատկությունները,*<br>*Ա6. ներկայացնել սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների, ուսումնական նախագծերի իրականացման, դրանց արդյունքների վերլուծության սկզբունքներն ու կանոնները, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտներում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման, անվտանգային մշակույթի ձևավորման, տիպային և ոչ տիպային սոցիալ-մանկավարժական, հոգեբանական ու մեթոդական խնդիրներ լուծելու ռազմավարությունները, տեխնոլոգիաները, մեթոդական գործիքակազմը:* |
| Բ. Գործնական մասնագիտական կարողություններ |
| *Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝*<br><br>*Բ1. իրականացնել սոցիալ-մանկավարժական, նաև հոգեբանական հետազոտություններ, դիագնոստիկա և* |

| |
|---|
| *գնահատում, խորհրդատվություն նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցում, տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում,*<br>*Բ2. վերլուծել և գնահատել անձի վարքի հիմնական պատճառները, առանձնահատկությունները, սեփական մասնագիտական գործունեության առաջընթացը՝ պլանավորելով հետագա զարգացումը՝ նաև ինքնակրթության ուղին,*<br>*Բ3. իրականացնել համապատասխան սոցիալ-մանկավարժական կառավարչական, խորհրդատվական, աջակցման, վերականգնողական, շտկողական աշխատանքներ ընտանիքներում, կրթության, սոցիալական պաշտպանության, զինվորական, քրեակատարողական և այլ հիմնարկներում, սոցիալականացման տեսանկյունից ռիսկային համարվող խմբերի, երեխաների և մեծահասակների հետ,*<br>*Բ4. կիրառել սոցիալ-մանկավարժական մասնագիտական աշխատանքում առողջ ապրելակերպի, առողջության պահպանման գիտելիքներն ու կարողությունները և կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների հետ աշխատանքի կազմակերպման ու իրականացման մեթոդաբանությունը,*<br>*Բ5. ընտրել ամենատարբեր, հատկապես՝ արտակարգ իրավիճակներում սոցիալ-մանկավարժական գործունեություն իրականացնելու և այն կառավարելու, համակարգելու նպատակահարմար մեթոդներ, տեխնոլոգիաներ և գործնականում արդյունավետ կիրառել դրանք,*<br>*Բ6. կիրառել ժամանակակից սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներ, արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում, օգտագործելով կրթության որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները:* |
| Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ |
| *Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝*<br><br>*Գ1. կառուցել գրավոր և բանավոր խոսքը (մայրենի և օտար լեզվով), համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, աշխատանքներում՝ դրսևորելով հոգեբանամանկավարժական պատշաճ գրագիտություն և պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը,*<br>*Գ2. օգտվել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից, ծրագրերից (Word, Excel, Power Point)՝ պահպանելով տեղեկատվական աղբյուրների օգտագործման բարոյական և իրավական նորմերը, ակադեմիական ազնվության չափանիշները,*<br>*Գ3. կիրառել տարատեսակ տեղեկատվական աղբյուրներ (գրադարաններ, համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) և ՏՀՏ տեխնոլոգիաներ ՝ դրսևորելով դրանցից օգտվելու ունակություններ, տեղեկատվական գրագիտություն (որոնել, ընտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն) և մասնագիտական գործունեությունն արդյունավետ պլանավորելու, իրականացնելու և գնահատելու կարողություն*<br>*Գ4. պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները, կայացնել ինքնուրույն որոշումներ, ղեկավարել խումբը, պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, կառուցել նախագծեր:* |

| **15. Գնահատման մեթոդներ** |
|---|
| *«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով: Գնահատվում են ուսանողի՝ ա. գիտելիքը, բ. ունակություններն ու կարողությունները, գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը:* |

*Դասընթացների գնահատման մեթոդներից են՝*
*1. տեսական դասընթացների պարագայում՝*
*գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, ռեֆերատներ, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ), թղթապանակ,*
*2. գործնական դասընթացների պարագայում՝*
*գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ, թղթապանակ, գործնական աշխատանքների անհատական հանձնում,*
*Հետազոտական աշխատանքների (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական թեզ) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:*
*Գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:*
*Գնահատման մանրամասները տես՝ ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում: http://armspu.am/*

## 16. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ

*Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան իրականացվում են բուհի համապատասխան ստորաբաժանման կողմից սահմանված փոքրաթիվ ակադեմիական խմբերով: Վերջինս հնարավորություն է տալիս անհատապես աշխատել յուրաքանչյուր ուսանողի հետ, նպաստել նրա զարգացմանը: Դասավանդման գործընթացում ընտրված են գործնական, ինտերակտիվ մեթոդներ, դրսևորվում է ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ նպատակ ունենալով ապահովել ուսանողի անձնային և մասնագիտական կարողությունների համաչափ աճը, անհատական զարգացումը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ակտիվությունը, մասնագիտական գործունեություն իրականացնելու մոտիվացիայի ձևավորումը, մասնագիտական հարմարումը: Ուսումնառության ողջ ընթացքում շեշտադրվում է ուսանողների հետազոտական, վերլուծական կարողությունների ձևավորումը, ստեղծագործական մտածողության զարգացումը:*
*Ուսուցման կազմակերպման հիմնական ձևերն են լսարանային (տեսական և գործնական) պարապմունքները, մասնագիտական խորհրդատվությունը, պրակտիկաները՝ հետազոտական և մանկավարժահետազոտական, հետազոտական աշխատանքը: Ուսումնական պլանում ընդգրկված են հիմնականում գործնական դասընթացներ, որոնց վերջնարդյունքները բավարարում են ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, ինչպես նաև հնարավորություն են տալիս շրջանավարտին կողմնորոշվելու մասնագիտական գործունեության ոլորտի ընտրության հարցում*

## 17. Ուսումնական պլանի քարտեզը

*Տես կցված հավելված 1*

## 18. Մասնագիտական գործունեության ոլորտներ

***«Սոցիալական մանկավարժություն»*** *մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել հետևյալ բնագավառներում*

1. *հանրակրթական դպրոցներում՝ որպես սոցիալական մանկավարժ,*

2. *երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, մանկատներում, արտադասարանական ուսումնադաստիարակչական կենտրոններում որպես սոցիալական մանկավարժ,*
3. *ընտանիքի և երեխաների աջակցության ցերեկային կենտրոններում՝ որպես սոցիալական մանկավարժ,*
4. *տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում՝ որպես սոցիալական մանկավարժ,*
5. *մանկավարժական գիտական-կրթական կենտրոնների (համալիրների) աշխատակից,*
6. *դաստիարակչական հաստատությունների մանկավարժ, դաստիարակ, սոցիալական մանկավարժ,*
7. *շտկողական-զարգացնող, վերականգնողական հաստատությունների սոցիալական մանկավարժ,*
8. *բժշկական հիմնարկներում՝ որպես սոցիալական մանկավարժ,*
9. *զինվորական ստորաբաժանումներում, քրեակատարողական հիմնարկներում, պրոբացիայի ծառայությունում որպես սոցիալական կրթության մասնագետ, մանկավարժ,*
10. *ծերերի խնամքի կազմակերպման կենտրոններում՝ որպես սոցիալական մանկավարժ:*

**19. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս**

*Կրթական ծրագրերի մշակման համար որպես արտաքին կողմնորոշիչներ ծառայել են հետևյալ աղբյուրները՝*

- *ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենք:*
- *Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները:*
- *Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը:*
- *Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները):*
- *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակ:*
- *ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները:*
- *Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրեր:*
- *ՀՀ ,,Երեխաների իրավունքների մասին´´ օրենք:*
- *ՄԱԿ-ի ,,Երեխաների իրավունքների կոնվենցիա´´:*
- *ՀՀ ,,Հանրակրթության մասին´´ օրենք:*

**20. Հետագա ուսման հնարավորությունները**

*Ազգային որակավորումների շրջանակով սահմանված 7-րդ (մագիստրոսի) մակարդակ:*

**21. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ**

**Հավելված 1**

**«Սոցիալական մանկավարժություն» ԿԾ /բակալավր/-ի ուսումնական պլան ըստ ուստարիների և կիսամյակների**

**Առաջին տարի**

| ***Աշնանային կիսամյակ*** | **ժամեր** | **կրեդիտներ** | ***Գարնանային կիսամյակ*** | **ժամեր** | **կրեդիտներ** |
|---|---|---|---|---|---|
| ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | | ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | |
| Հայոց լեզու և գրականություն | 60 | 2 | Հայոց լեզու և գրականություն | 60 | 2 |
| Հայոց պատմություն | 60 | 2 | Հայոց պատմություն | 60 | 2 |
| Օտար լեզու | 120 | 4 | Օտար լեզու | 120 | 4 |
| Ֆիզիկական դաստիարակություն | 30 | 1 | Ֆիզիկական դաստիարակություն | 30 | 1 |
| Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ | 60 | 2 | ՏՀՏ հենքային դասընթաց | 60 | 2 |
| ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | | ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | |
| Մանկավարժություն | 210 | 7 | Մանկավարժություն | 150 | 5 |
| Էթնոմանկավարժություն | 60 | 2 | Սոցիալական մանկավարժություն | 210 | 7 |
| Ընդհանուր հոգեբանություն | 150 | 5 | Ընդհանուր հոգեբանություն | 120 | 4 |
| Կրթության հոգեբանության արդի ուղղությունները | 150 | 5 | Տարիքային հոգեբանություն | 90 | 3 |
| | | | | | |
| | | | | | |
| ***Կամընտրական դասընթացներ*** | | | ***Կամընտրական դասընթացներ*** | | |
| | | | | | |
| ***Այլ կրթաբլոկ*** | | | ***Այլ կրթաբլոկ*** | | |
| | | | | | |
| **Ընդամենը** | 900 | 30 | | 900 | 30 |

## Երկրորդ տարի

| *Աշնանային կիսամյակ* | ժամեր | կրեդիտներ | *Գարնանային կիսամյակ* | ժամեր | կրեդիտներ |
|---|---|---|---|---|---|
| ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | | ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | |
| Օտար լեզու | 120 | 4 | Օտար լեզու | 120 | 4 |
| Փիլիսոփայություն | 60 | 2 | Ֆիզիզկական դաստիարակություն | 30 | 1 |
| Ֆիզիկական դաստիարակություն | 30 | 1 | Բնապահպանություն և շրջակա միջավայրի խնդիրներ | 60 | 2 |
| ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | | ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | |
| Կրթության և մանկավարժական մտքի պատմություն | 120 | 4 | Գործնական մանկավարժություն | 90 | 3 |
| Սոցիալական մանկավարժություն | 150 | 5 | Մանկավարժական պրակտիկում | 90 | 3 |
| Մանկավարժական հաղորդակցում | 120 | 4 | Մաթեմատիկական վիճակագրական մեթոդները սոցիալական գիտությունների համակարգում | 60 | 2 |
| Տարիքային հոգեբանություն | 120 | 4 | Սոցիալական մանկավարժության պատմություն | 120 | 4 |
| Հոգեբանական պրակտիկում | 90 | 3 | Մանկավարժական հաղորդակցում | 120 | 4 |
| Մաթեմատիկա | 90 | 3 | Տարիքային հոգեբանություն | 120 | 4 |
| | | | | | |
| ***Կամընտրական դասընթացներ*** | | | ***Կամընտրական դասընթացներ*** | | |
| | | | | | |
| ***Այլ կրթաբլոկ*** | | | ***Այլ կրթաբլոկ*** | | |
| | | | Մանկավարժական պրակտիկա /շաբաթը մեկ անգամ/ | 90 | 3 |
| **Ընդամենը** | 900 | 30 | | 900 | 30 |

## Երրորդ տարի

| *Աշնանային կիսամյակ* | **ժամեր** | **կրեդիտներ** | *Գարնանային կիսամյակ* | **ժամեր** | **կրեդիտներ** |
|---|---|---|---|---|---|
| ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | | ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | |
| Օտար լեզու | 60 | 2 | Օտար լեզու | 60 | 2 |
| Ներառական կրթություն | 60 | 2 | Ընտրովի դասընթաց ՄՀ-ից | 60 | 2 |
| ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | | *Մասնագիտական պարտադիր դասընթացներ* | | |
| Մանկավարժական հոգեբանություն | 60 | 2 | Սոցիալական մանկավարժություն | 120 | 4 |
| Ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցություն | 90 | 3 | Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն | 90 | 3 |
| Սոցիալական մանկավարժություն | 120 | 4 | Սոցիալական հոգեբանություն | 90 | 3 |
| Սոցիալական մանկավարժության պատմություն | 120 | 4 | Ընտանեկան հոգեբանության հիմունքներ և խորհրդատվություն | 60 | 2 |
| Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա | 90 | 3 | Սոցիալական ադապտացիայի հոգեբանություն | 60 | 2 |
| Սոցիալական հոգեբանություն | 90 | 3 | Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ | 60 | 2 |
| | | | Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկա | 60 | 2 |
| | | | | | |
| ***Կամընտրական դասընթացներ*** | | | ***Կամընտրական դասընթացներ*** | | |
| Ընտրովի դասընթաց 1 ՀՍՏ-ից | 60 | 2 | Ընտրովի դասընթաց ՄՀ-ից | 60 | 2 |
| ***Այլ կրթաբլոկ*** | | | ***Այլ կրթաբլոկ*** | | |
| Կուրսային աշխատանք /Մանկավարժություն և սոցիալական մանկավարժություն/ | 60 | 2 | Կուրսային աշխատանք /Սոցիալական մանկավարժություն և սոցիալական հոգեբանություն/ | 60 | 2 |
| Մանկավարժական պրակտիկա /շաբաթը մեկ անգամ/ | 90 | 3 | Մանկավարժական պրակտիկա | 180 | 6 |
| **Ընդամենը** | 900 | 30 | | 900 | 30 |

Չորրորդ տարի

| Աշնանային կիսամյակ | ժամեր | կրեդիտներ | Գարնանային կիսամյակ | ժամեր | կրեդիտներ |
|---|---|---|---|---|---|
| ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | | ***Ընդհանուր կրթական պարտադիր դասընթացներ*** | | |
| Օտար լեզու | **60** | **2** | Օտար լեզու | **60** | **2** |
| | | | Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն | **60** | **2** |
| | | | | | |
| ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | | ***Մասնագիտական պարտադիր դասընթացներ*** | | |
| Սոցիալական հոգեբանություն | **90** | **3** | Շտկողական մանկավարժություն և հատուկ հոգեբանություն | **90** | **3** |
| Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ | **60** | **2** | Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում | **90** | **3** |
| Հոգեբանության պատմություն | **60** | **2** | Սոցիալական աշխատանքի հիմունքներ | **90** | **3** |
| Հաղորդակցման հոգեբանություն | **60** | **2** | Հոգեբանական խորհրդատվության և շտկման հիմունքներ | **90** | **3** |
| Հոգեբանական ախտորոշում | **90** | **3** | Հաղորդակցման դժվարությունների հոգեբանություն | **90** | **3** |
| Սոցիալ-մանկավարժական պրակտիկում | **90** | **3** | Սոցիալ-մանկավարժական պրակտիկում | **60** | **2** |
| ***Կամընտրական դասընթացներ*** | | | ***Կամընտրական դասընթացներ*** | | |
| Ընտրովի դասընթաց* 2 ՀՄՏ-ից | **60** | **2** | Ընտրովի դասընթաց 2* մասնագիտական | **90** | **3** |
| Ընտրովի դասընթաց 1* մասնագիտական | **90** | **3** | | | |
| | | | | | |
| | | | | | |
| ***Այլ կրթաբլոկ*** | | | ***վ*** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մանկավարժական պրակտիկա | 180 | 6 | Ամփոփիչ ատեստավորման պաշտպանություն | 180 | 6 |
| Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում | 60 | 2 | | | |
| **Ընդամենը** | 900 | 30 | | 900 | 30 |

**Հավելված 2**

| ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ | | | |
|---|---|---|---|
| **N** | **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ և ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ** | **ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** |
| **Ա1** | *Ներկայացնել ՀՀ-ի կրթության քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվային և իրավական ակտերը, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ և ծրագրեր), կրթության հիմնական հասկացությունները* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Ա2** | *մեկնաբանել մանկավարժական, սոցիալ-մանկավարժական մտքի ձևավորման ու զարգացման պատմությունը, ժամանակակից հիմնախնդիրները, սոցիալ-մանկավարժական և հոգեբանական գիտությունների տեսական հիմքերը, սկզբունքներն ու հայեցակարգերը, միջգիտական կապերը (հասարակագիտական, բնագիտամաթեմատիկական և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ), կրթական համակարգերի զարգացման փուլերը, ուսուցման կազմակերպման ձևերը (այդ թվում նաև ներառական), կրթության որակի չափորոշիչները* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Վենի դիագրամ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Ա3.** | *բնութագրել անձին որպես* | • Ինտերակտիվ | • Ընթացիկ առաջադրանքների |

| | | | |
|---|---|---|---|
| | *մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական, զարգացման առանձնահատկությունները, սոցիալականացման մեխանիզմները, օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ- մշակութային, տնտեսական) գործոնները, սոցիալականացման շեղումների պատճառները, դրանց կանխարգելման, հաղթահարման սոցիալ-մանկավարժական և հոգեբանական ուղիները* | դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Վենի դիագրամ<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Ա4.** | *մեկնաբանել սոցիալական մանկավարժի մասնագիտության առանձնահատկությունները, մասնագիտական գործունեության ուղղությունները, գործառույթները, տարբեր մասնագետների, սոցիալական ինստիտուտների և ծառայությունների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բովանդակությունը, ուղղությունները, այն իրականացնելու ուղիները, հնարներն ու ձևերը* | • Ինտերակտիվ զրույց<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Մոդելավորում<br>• Վենի դիագրամ<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանք<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Ա5.** | *ձևակերպել նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում, մանկատներում, ցերեկային, շուրջօրյա խնամքի կենտրոններում, այլընտրանքային խնամքի գործընթացներում, քրեակատարողական, զինվորական, բժշկական հիմնարկներում, նաև սոցիալականացման տեսանկյունից խոցելի համարվող խմբերի հետ սոցիալ-մանկավարժական գործունեության գործառույթները, ուղղությունները,* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Վենի դիագրամ<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |

| | | | |
|---|---|---|---|
| | *առանձնահատկությունները* | | |
| **Ա6.** | *ներկայացնել սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների, ուսումնական նախագծերի իրականացման, դրանց արդյունքների վերլուծության սկզբունքներն ու կանոնները, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտներում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման, անվտանգային մշակույթի ձևավորման, տիպային և ոչ տիպային սոցիալ-մանկավարժական, հոգեբանական ու մեթոդական խնդիրներ լուծելու ռազմավարությունները, տեխնոլոգիաները, մեթոդական գործիքակազմը* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Վենի դիագրամ<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • |
| **N** | | **ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** |
| **Բ1** | *իրականացնել սոցիալ-մանկավարժական, նաև հոգեբանական հետազոտություններ, դիագնոստիկա և գնահատում, խորհրդատվություն նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցում, տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում* | • Ինտերակտիվ զրույց<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Թեստային աշխատանք<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում<br>• Հետազոտական աշխատանքի կատարում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանք<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Բ2** | *վերլուծել և գնահատել անձի վարքի հիմնական պատճառները, առանձնահատկությունները, սեփական մասնագիտական գործունեության առաջընթացը՝* | • Ինտերակտիվ զրույց<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Սեմինար<br>• Նախագծում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանք<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների |

| | | | |
|---|---|---|---|
| | *պլանավորելով հետագա զարգացումը՝ նաև ինքնակրթության ուղին* | • Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Բ3** | *իրականացնել համապատասխան սոցիալ-մանկավարժական կառավարչական, խորհրդատվական, աջակցման, վերականգնողական, շտկողական աշխատանքներ ընտանիքներում, կրթության, սոցիալական պաշտպանության, զինվորական, քրեակատարողական և այլ հիմնարկներում, սոցիալականացման տեսանկյունից ռիսկային համարվող խմբերի, երեխաների և մեծահասակների հետ* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Սեմինար<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Բ4** | *կիրառել սոցիալ-մանկավարժական մասնագիտական աշխատանքում առողջ ապրելակերպի, առողջության պահպանման գիտելիքներն ու կարողությունները և կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների հետ աշխատանքի կազմակերպման ու իրականացման մեթոդաբանությունը* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանք<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Բ5** | *ընտրել ամենատարբեր, հատկապես՝ արտակարգ իրավիճակներում սոցիալ-մանկավարժական գործունեություն իրականացնելու և այն կառավարելու, համակարգելու նպատակահարմար մեթոդներ,* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Դերային խաղ<br>• Գործնական խմբային | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի |

| | | | |
|---|---|---|---|
| | *տեխնոլոգիաներ և գործնականում արդյունավետ կիրառել դրանք* | աշխատանք<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **Բ6** | *կիրառել ժամանակակից սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներ, արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում, օգտագործելով կրթության որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները* | • Մոդելավորում<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Դերային խաղ<br>• Ուսումնական նախագիծ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում<br>• Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատում |
| **N** | | **ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** |
| **Գ1** | *կառուցել գրավոր և բանավոր խոսքը (մայրենի և օտար լեզվով), համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, աշխատանքներում՝ դրսևորելով հոգեբանամանկավարժական պատշաճ գրագիտություն և պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Ուսումնական նախագիծ<br>• Թեստային աշխատանք<br>• Մոդելավորում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանքի գնահատում<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ |
| **Գ2** | *օգտվել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից, ծրագրերից (Word, Excel, Power Point)՝ ահպանելով տեղեկատվական աղբյուրների օգտագործման բարոյական և իրավական նորմերը, ակադեմիական ազնվության չափանիշները* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Սեմինար<br>• Զրույց | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում |

| | | | |
|---|---|---|---|
| **Գ3** | *կիրառել տարատեսակ տեղեկատվական աղբյուրներ (գրադարաններ, համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) և ՏՀՏ տեխնոլոգիաներ ՝ դրսևորելով դրանցից օգտվելու ունակություններ, տեղեկատվական գրագիտություն (որոնել, ընտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն) և մասնագիտական գործունեությունն արդյունավետ պլանավորելու, իրականացնելու և գնահատելու կարողություն* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Ցուցադրություն<br>• Բացատրություն<br>• Սեմինար<br>• Նախագծում<br>• Դերային խաղ<br>• Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում և քննարկում<br>• Ինքնապատրաստում, գրականության մշակում | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանք<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում |
| **Գ4** | *պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները, կայացնել ինքնուրույն որոշումներ, ղեկավարել խումբը, պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, կառուցել նախագծեր* | • Ինտերակտիվ դասախոսություն<br>• Բացատրություն<br>• Բանավեճ<br>• Նախագծում<br>• Մոդելավորում<br>• Դերային խաղ | • Ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• Թեստային առաջադրանքի ստուգում<br>• Գրավոր, բանավոր և էլեկտրոնային առաջադրանքների ստուգումներ<br>• Ցուցադրությունների, նախագծերի արդյունքների մասին զեկուցումների ստուգում և գնահատում<br>• Ռեֆերատի, թղթապանակի, ստուգողական գրավոր աշխատանքների ստուգում |

**Հավելված 3**

| | | **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Դասընթացի անվանումը** | | **Գիտելիք և իմացություն** | | | | | | **Գործնական մասնագիտական** | | | | | | **Ընդհանրական (փոխանցելի)** | | | |
| | | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **1** | **2** | **3** | **4** |
| 1 | Հայոց լեզու և գրականություն | | | | | | | | | | | | | √ | | | √ |
| 2 | Հայոց պատմություն | √ | | √ | | | | | | | | | | | | | |
| 3 | Օտար լեզու | | | | | | | | | | | | | √ | | | √ |
| 4 | Փիլիսոփայություն | | √ | √ | | | | | | | | | | | | | √ |
| 5 | Ֆիզիկական դաստիարակություն | | | √ | | | | | | | √ | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Ընտրովի դասընթաց 1 ՀUS-ից | | | √ | | | √ | | | √ | | | | | | | √ |
| 7 | Ընտրովի դասընթաց 2 ՀUS-ից | | | √ | | | √ | | | √ | | | | | | | √ |
| 8 | ՏՀS հենքային դասընթաց | | | | | | | | | | | | | | √ | √ | |
| 9 | Բնապահպանություն և շրջակա միջավայրի խնդիրներ | | √ | √ | | | | | | | | | | | | | |
| 10 | Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն | | | | √ | | √ | | | | | √ | | | | | |
| 11 | Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ | | | | √ | | √ | | | | | √ | | | | | |
| 12 | Ներառական կրթություն | | √ | √ | | | | √ | | | √ | | √ | | | | |
| 13 | Ընտրովի[1] դասընթաց ՄՀ-ից | | | | | | | | | | | | | | | | |
| 14 | Էթնոմանկավարժություն | | √ | √ | | | | | | | | | | | | | |
| 15 | Մանկավարժություն | √ | √ | √ | | | | | √ | | | | √ | √ | | | √ |
| 16 | Կրթության և մանկավարժական մտքի պատմություն | | √ | | | | | | | | | | | | | | √ |
| 17 | Սոցիալական մանկավարժություն | | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | | √ | √ | √ | √ |
| 18 | Մանկավարժական հաղորդակցում | | | | √ | | | | √ | | | | | √ | | | |
| 19 | Մանկավարժական պրակտիկում | | | | | | | √ | √ | | | √ | √ | √ | | | √ |
| 20 | Գործնական մանկավարժություն | | | | | | | √ | √ | √ | √ | √ | √ | | | | √ |
| 21 | Սոցիալական մանկավարժության պատմություն | | √ | √ | | | | | | | | | | | | | √ |
| 22 | Ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցություն | | | √ | √ | | √ | | | √ | √ | | | | | | |
| 23 | Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն | | √ | √ | | | | | | | | | | | | | |
| 24 | Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ | | | | √ | √ | √ | √ | | | | √ | √ | | | √ | |
| 25 | Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկա | | | √ | √ | √ | √ | √ | √ | | | | √ | | | | √ |
| 26 | Սոցիալ-մանկավարժական պրակտիկում | | | | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | | | √ | √ |
| 27 | Կրթության հոգեբանության արդի ուղղությունները | | √ | √ | | | √ | √ | √ | | | | | | | | |

[1] Ընտրովի դասընացների համար չենք նշում կրթական ելքային արդյունքների տիրույթը, քանի որ յուրաքանչյուր կիսամյակում այդ դասընթացները փոփոխվում են, իհարկե՝ ձևակերպված վերջնարդյունքների հաշվառմամբ:

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | Ընդհանուր հոգեբանություն | | √ | √ | | | √ | √ | √ | | | | | √ | | | √ |
| 29 | Հոգեբանական պրակտիկում | | | | √ | | √ | √ | √ | | | | | √ | | | √ |
| 30 | Տարիքային հոգեբանություն | | | √ | | | √ | | √ | √ | | √ | | | | | |
| 31 | Մանկավարժական հոգեբանություն | | √ | √ | | | √ | | | √ | | | | | | | √ |
| 32 | Սոցիալական հոգեբանություն | | | √ | √ | | √ | √ | √ | | | √ | | √ | | | √ |
| 33 | Ընտանեկան հոգեբանության հիմունքներ և խորհրդատվություն | | | √ | | √ | | √ | | √ | | | | | | | |
| 34 | Սոցիալական ադապտացիայի հոգեբանություն | | | √ | √ | | √ | √ | √ | | | √ | | | | | |
| 35 | Հոգեբանության պատմություն | | √ | √ | | | √ | | | | | | | | | | |
| 36 | Հաղորդակցման հոգեբանություն | | | | √ | | | | | √ | | | | √ | | | √ |
| 37 | Մաթեմատիկա | | | | | | | √ | | | | | | | | | √ |
| 38 | Մաթեմատիկական վիճակագրական մեթոդները սոցիալական գիտությունների համակարգում | | | | | | √ | √ | | | | | | | | | √ |
| 39 | Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա | | | | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | | | √ | √ |
| 40 | Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ | √ | | √ | √ | √ | | √ | | | | | | √ | √ | √ | √ |
| 41 | Հոգեբանական ախտորոշում | | | √ | | | √ | √ | √ | | | | √ | | | | √ |
| 42 | Շտկողական մանկավարժություն և հատուկ հոգեբանություն | | √ | √ | | | | √ | | √ | √ | | √ | | | | |
| 43 | Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում | | | | √ | √ | √ | | | √ | | | | | | | |
| 44 | Սոցիալական աշխատանքի հիմունքներ | | | | √ | √ | √ | | | √ | | | | | | | |
| 45 | Հոգեբանական խորհրդատվության և շտկման հիմունքներ | | √ | √ | | | | √ | | √ | √ | | √ | | | | |
| 46 | Հաղորդակցման դժվարությունների հոգեբանություն | | | | √ | | | | | √ | | | | √ | | | √ |
| 47 | Կուրսային աշխատանք /Սոցիալական մանկավարժություն և սոցիալական հոգեբանություն/ | | √ | √ | | | √ | √ | | | | | | √ | √ | √ | √ |
| 48 | Կուրսային աշխատանք /Մանկավարժություն և սոցիալական մանկավարժություն/ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | | | | | | √ | √ | √ | √ |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | Մանկավարժական պրակտիկա | | | | | | | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ | √ |
| 50 | Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում | | | | | | | √ | | | | | | √ | √ | √ | √ |
| 51 | Ամփոփիչ ատեստավորման պաշտպանություն | | | | | | | | | | | | | √ | | | √ |